ISSN 1829-0361

ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(13)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(13)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(13)

YEREVAN 2024 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(13)

ԵՐԵՎԱՆ 2024

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Նելլի Կարապետյան – *պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր,* Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ,* Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ,*
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,*
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԽԻՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անդրանիկ Եսայան

Տավուշ գավառի հոգևոր-մշակութային կյանքը 17-րդ դարում 8

Իրինա Բաղալյան

Այլախոհական և իրավապաշտպան շարժումները
խորհրդային հայաստանում 1960–1980-ական թվականներին 19

Սամվել Պողոսյան

Տիրան արք. Ներսոյանի արխիվը Երուսաղեմի
Հայոց Պատրիարքության Մայր Դիվանում (տեղեկագիր) 37

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մաքսիմ Եվաղյան

Նախնական դիտարկումներ Միտրիդատ I թագավորի դրամի մասին,
չհրապարակված կորպուս և մտորումներ նրա թագավորական
գաղափարախոսության մասին 52

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ասպղիկ Իսրայելյան

Հայկական գաղթավայրերից մի քանիսի ոսկերիչները 70

Հրազդան Թոքմաջյան

Պաշտամունքային կառույցները ասեղնագործություններում 92

Արփակ Ասատրյան

Խորանազարդ սինիներ (ըստ ՀԱԹ, ՀՊԹ, ԵՔՊԹ, ԿԵԹ և ԴԵԹ նյութերի) 99

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Լիաննա Գևորգյան

Ձանգվածային մշակութային միջոցառումները որպես
ժամանակակից թանգարանի գործունեության ակտիվացման միջոց 122

Մեդա Գալստյան

Հավերժի ճամփորդներ. Անկատար երազանքներ ցուցադրությունը 136

Տաթևիկ Մարոյան

Սուրճի առօրեականության պատմության թանգարանային
ներկայացումը և շարունակական կրթության բաղադրիչը 149

Մանե Խառատյան

Ճապոնական ոկիյո-է գրաֆիկական աշխատանքների
ՀՊԹ-ում պահվող հավաքածուն 164

Ասպղիկ Սիմոնյան

Հնագիտական առարկաների վերականգնում. խեցեղենի
վերականգնման առանձնահատկությունները 192

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 199

DOI:10.56653/18290361-2024.13-93

Հրազդան Թոքմաջյան

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
hrazdantok@hotmail.com

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

Հիմնաբառեր. Ուրֆայի ասեղնագործություն, եկեղեցիներ, մզկիթներ, մեհյաններ, խաչ, մահիկ, կենաց ծառ:

Ներածություն

Բրունո Էքարտի հավաքածուի[1] առաջին ուսումնասիրողներից է Հայաստանի ազգային պատկերասրահի նախկին փոխտնօրեն, արվեստաբան Հասմիկ Հարությունյանը (Հարությունյան 1987, Հարությունյան 1996): Նա Ուրֆայի ասեղնագործության մեջ ընդհանրացած զարդաձևերը բաժանել է չորս հիմնական խմբերի, որոնցից մեկը ճարտարապետականն է: Պետք է նշել, որ ոչ միայն Էքարտի հավաքածուի՝ այսինքն Ուրֆայի և հարակից շրջանների ասեղնագործություններում են հանդիպում ճարտարապետական ձևերը, այլև լայն տարածում ունեն, ամենասիրված և տարածված թեմաներից են: Պահպանված աշխատանքներում կան և ամբողջական թաղամասերի պատկերներ (նկ. 1), և առանձին հանդես եկող կառույցներ: Կան շենքեր, որոնք ծառերի, ծաղիկների և այլ բաղադրիչների հետ համադրությամբ կազմել են բարդ զարդաձևեր, որոնք հանդես են գալիս թե՛ առանձին, և թե՛ կրկնությամբ՝ որպես զարդագոտիներ (նկ. 2):

Մեր կարծիքով երևույթը առավել ուշագրավ է դառնում, երբ իր զուգահեռ արտահայտությունն է գտնում կիրառական արվեստի այլ ոլորտներում: Այս իմաստով պակաս հետաքրքրական չեն գորգերում պատկերված շենքերը (նկ. 3): Ծիսական և կենցաղային սպասքի վրա, ավանդական տարազում (նկ. 4), առանձնատների սրահների որմնանկարներում և այլ դեպքերում որոշակի շենքերի պատկերման բազմաթիվ օրինակներ կան (նկ. 5):

Եկեղեցիներ, մզկիթներ, մեհյաններ

Մեր դիտարկումները հիմք են տալիս հյուսված, նկարված, փորագրված, դրվագված և հատկապես ասեղնագործված շենքերը բաժանել երեք հիմնական խմբերի:

---

* Ստացվել է 10.07.2023 թ., ուղարկվել է գրախոսման 13.07.2023 թ., ընդունվել է տպագրության 01.07.2024:

1 Հավաքածուի մասին տե՛ս Պատրիկ 1985: Թոքմաջյան 2014:

ա) Առաջին խմբին են պատկանում եկեղեցիների պատկերները: Սրանք նախ և առաջ ճանաչելի են գմբեթների և զանգակատների խաչերով: Որոշ հորինվածքներում մզկիթներն ու եկեղեցիները հանդես են գալիս միասին: Երբեմն կարելի է նմանության եզրեր գտնել պատկերված շենքերի և որոշակի հուշարձանների միջև (նկ. 6):

բ) Առանձին խումբ են կազմում մզկիթների պատկերները: Երկրաչափական, պարզ ձևերի վերածված, ոճավորված շենքերը հատկապես ճանաչելի են գմբեթների կամ մինարեթների վրա գտնվող կիսալուսիններով: Կան բարդ կառուցվածք ունեցող պատկերներ, որոնք բնանկարի հատկություններ են դրսևորում (նկ. 7):

գ) Մեր դիտարկած երրորդ խումբը կազմում են հենց այն շենքերի պատկերները, որոնցում կառույցների բարձրադիր մասերը չեն պսակվում ոչ մահիկներով, ոչ խաչերով և ոչ էլ անորոշ նշաններով: Գմբեթների վրա որոշակիորեն հայտնվում են ոճավորված վարսանդա-պտղային ձևեր, ճյուղեր, տերևներ կամ ավելի ստույգ՝ կենաց ծառի պատկերներ (նկ. 8):

Այս երևույթը նկատել և խորությամբ ուսումնասիրել է ձեռագրագետ Ասատուր Մնացականյանը: Նրա ուսումնասիրությունը հիմնված է հատկապես մանրանկարչության օրինակների վրա (նկ. 9):

Նա հանգամանորեն ներկայացրել է համապատասխան ձևերի զարգացման ընթացքը. ծիսական կառույցների վրա նախաքրիստոնեական խորհրդանշանների խաչով փոխարինվելու երևույթը: Մանրանկարներից բերված օրինակներով նա ներկայացնում է թե՛ գմբեթների վրա ի հայտ եկող կենաց ծառեր, և թե՛ վարսանդա-պտղային ձևեր:

Ա. Մնացականյանի մանրանկարչությունից բերած օրինակները արժեքավոր են նաև նրանով, որ անհամեմատ ավելի հին են քան պահպանված և մեզ հասած ձեռագործները: Գաղտնիք չէ, որ ուսումնասիրվող ասեղնագործությունները վերաբերում են 17–20-րդ դարերին: Միջնադարից պահպանված ձեռագործ պատառիկները հազվագյուտ են, մինչդեռ ձեռագիր մատյանները միջնադարին վերաբերող հսկայական նյութ են պարունակում:

Պետք է նշել, որ ուսումնասիրողների ուշադրությունից չի վրիպել կիրառական արվեստում պահպանված մեհյաններին վերաբերող ևս մի վերհուշ: Խոսքը վերաբերում է Խորան գորգերին: Ազգագրագետ Լիլիա Ավանեսյանն իր հոդվածում անդրադարձել է այդպիսի մի գորգի թե՛ քրիստոնեական խորհրդին, և թե՛ գորգանկարի պատկերների ստուգաբանությանը և իմաստաբանությանը: Նա գրում է. «Առաջավոր Ասիայում հայտնաբերված մի շարք տաճարներ ունեն առանձնահատուկ ճարտարապետություն: Կորնթոսյան խոյակներով սյունազարդ սրահները, կլոր հատակագիծը, «սրբազան» ավազանը վկայում են դրանց նվիրված լինելը ջրային աստվածություններին: Այդ տաճարները ճարտարապետության պատմության ուսումնասիրող Յոզեֆ Ստրժիգովսկին անվանել է «Tempietto» (Тревеb 1969, 49): «Tempietto» տաճարի պատկերները հանդիպում են 10-րդ դարի հայկական մանրանկարներում (Ավանէսեան 1999, 413–414):

Ապա եզրակացնում է, որ ուսումնասիրվող գորգի վրա գուցե պատկերված է «Tempietto»: Մեր կարծիքով, եթե նույնիսկ ուսումնասիրողները ունեն իրենց վե-

ռապահությունները այս կամ այն մեկնաբանության վերաբերյալ, անկարելի է չնկատել, որ պաշտամունքային կառույցներ պատկերելու սովորությունը մեծ կենսունակություն է դրսևորել և հնագույն ժամանակներից հասել 20-րդ դար:

Մեզ հետաքրքրում է այն հարցը, թե ինչպես են այս հնամենի ձևերը փոխանցվել սերնդեսերունդ և ինչպես են ընկալվել ժամանակակիցների կողմից: Ա. Մնացականյանը քրիստոնեական մշակույթում հեթանոսությունից եկող վերապրուկների մասին գրում է հետևյալը. «Քրիստոնեական կրոնական կառույցների գմբեթների վրա, հասկանալի պատճառներով, այդ հին սիմվոլները երկար դիմանալ չէին կարող և ի վերջո պիտի իսպառ անհետանային կամ դառնային հիմք իրենց վրա բարձրացող խաչերի համար: Բայց և այնպես այդ զարդերը քրիստոնեական որոշ կառույցների գմբեթների վրա կարողացել են հարատևել մինչև վերջին ժամանակները, իբրև հնից եկող զարդեր, որոնց նախկին բովանդակությունն այլևս չէր ըմբռնվում» (Մնացականյան 1955, 55):

Այն, որ գմբեթի խորհրդանշանը նախկին իմաստով չի ընկալվել՝ հասկանալի է: Հարցն այն է, թե ինչպես է ընկալվել: Եկեղեցի հիշեցնող, սակայն կենաց ծառ կրող շենքը, մանավանդ կանոնական արվեստում պետք է բացատրություն ունենար:

Ա. Մնացականյանը օրինակ է բերում հնագետ-արևելագետ Կարլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտի հրատարակած մի դամբարանի նկար: Խլաթում գտնվող այդ դամբարանի գմբեթի վրա «նստած է նախ հատիկի կլոր, ապա վարսանդապտղային սրածայր, ձվաձև սիմվոլները» (Մնացականյան 1955, 55): Կարելի է հիշել հնագույն օրինակ՝ ուրարտական Մուսասիրի տաճարը, ինչպես նաև մեզ ավելի հասանելի՝ հելլենիստական Գառնիի տաճարը:

Մի հանգամանքի վրա ևս արժե ուշադրություն դարձնել: Հասկանալի պատճառներով միջնադարյան ձեռագրերը հասանելի չէին ժողովրդին: Սրբագործված մատյաններին ձեռք տալու, առավել ևս թերթելու իրավունքը սահմանափակ էր: Ուստի և տվյալ խնդրի վերաբերյալ սահմանափակ մարդկանց մոտ կարող էին հարցեր առաջանալ:

Այլ է ձեռագործի պարագան: Այն մասսայական տարածում ուներ և ծիսական կառուցների՝ եկեղեցիների, մզկիթների և մեհյանների պատկերները կարող էին հայտնվել որևէ կնոջ ձեռքի տակ: Ուստի և այս դեպքում ժողովրդի մոտ կարող էին հարցեր առաջանալ: Այլ խոսքով, որևէ գեղջկուհու մոտ կարող է հարց առաջանալ, թե ասեղնագործվող գմբեթի վրա (իրենց առօրյայից եկող) սովորական խաչի կամ մահիկի փոխարեն ինչո՞ւ է ծառի ճյուղ պատկերվում:

Պէտք է նշել, որ հին ձևերը ոչ միայն իմաստազրկվելով վերածվել են նախշերի, այլև ձեռք են բերել նոր իմաստ: Խորհրդանշանների, գույների, կերպարների տարբեր ձևերի վերաբերյալ հայկական քրիստոնեական իմաստաբանությունը ունի իր մեկնություններն ու բացատրությունները: Այնպես է ստացվել, որ հայկական արվեստում շրջանառվող բազմաթիվ խորհրդանշաններ ունեն և՛ քրիստոնեական մեկնություններ, և՛ հեթանոսական: Այս երևույթը ևս ապացուցում է հայերի ստեղծած բազմադարյա մշակույթի անքակտելի ամբողջություն լինելը:

Մեզ հետաքրքրող հարցերից են նաև հնագույն ձևերի կենսունակության և

նրանց փոխանցման, ավանդման առանձնահատկությունները: Ի տարբերություն բանահյուսական ժառանգության, որը փոխանցվել է բերանացի և գրավոր, նկարչական, քանդակագործական և այլ տեսողական (վիզուալ) ձևերը հատկապես փոխանցվել են օրինակների միջոցով: Տեսականորեն որևէ ձև կամ զարդ, շենք կարող է պատկերվել հիմնվելով նկարագրության, տեսողական հիշողության վրա: Այլ է, երբ հարցը հարյուրամյակներով փոխանցվող զարդերին ու կերպարներին է վերաբերվում: Ակնհայտ է, որ նոր սերնդի վարպետները օգտվել են նախորդներից մնացած օրինակներից: Եվ եթե այդպիսի հին նմուշներ մեզ չեն հասել, դա չի նշանակում որ այդպիսիք չեն եղել:

Մենք մեկնում ենք այն ելակետից, որ մեհյանների պատկերները կիրառական արվեստ կարող էին ներմուծվել քրիստոնեությանը նախորդած ժամանակներում: Դա լիովին հասկանալի է համապատասխան կրոնա-գաղափարական միջավայրում: Մեր կարծիքով չպահպանված, մեզ չհասած հնագույն նախօրինակների կրկնությամբ են այդ կառույցների պատկերները հասել նոր ժամանակներ:

Չնայած ընդհանրացած է այն միտքը, թե քրիստոնեության առաջին տարիներին կրոնական մոլեռանդությամբ ոչնչացվել է հեթանոսական հարուստ ժառանգությունը, հին պատկերագրությունը մեծապես պահպանվել է և, նույնիսկ իմաստազրկված, թափանցել քրիստոնեական ձևամտածողության մեջ:

Հայկական միջնադարյան արվեստի բոլոր բնագավառներն իրենց մեջ կրում են հեթանոսությունից պահպանված որոշակի շերտ: Ավելին, այն կարծես հարազատ շարունակությունն է հին ավանդույթների՝ նոր շեշտադրումներով: Ասվածը հստակեցնելու և պարզելու համար տեսականորեն կարելի է տարանջատել միջնադարյան արվեստի գործերում զուտ քրիստոնեական ձևերը և հեթանոսական մշակույթից եկող բաղադրիչները: Նման բաժանումը ակնհայտ կդարձնի նախաքրիստոնեական ձևերի ահռելի քանակը, որը պահպանվել է մանրանկարներում, ձեռագործներում և այլուր:

Հարցին մոտենանք ևս մի տեսակետից. արդյո՞ք ավելի ուշ, միջնադարում չեն եղել բարենպաստ պայմաններ նման ձևերի առաջացման համար: Չէ՞ որ Հայաստանում քրիստոնեության ընդունումից հետո իսկ եղել են հեթանոս խմբեր: Փաստ է, որ Ներսես Շնորհալի կաթողիկոսը (1166–1173) Սամոսատում բնակվող արևորդիների համայնքից դարձի գալու համար պահանջել է մոռանալ «...արևի պաշտոնը, սատանայի պաշտամունքը և բարդի ծառի հարգանքը» (Օրմանեան 2001, Հատոր Ա, 978):

Այսպիսի հավաքականություններում իհարկե կարող էին ծառի կամ բողբոջի պատկերները ընկալվել ոչ թե որպես զարդ, այլ կրոնական, սրբազան իմաստով: Եվ եթե այս խմբերը եղել են ոչ թե ընդհատակյա աղանդներ, այլ գործել են բացահայտ, ունեցել են պաշտամունքային կենտրոն-կառույցներ, իհարկե կարող էին և պատկերել դրանք: Այնուամենայնիվ քիչ հավանական է թվում, որ մինչև ուշ միջնադար և նոր ժամանակներ որոշ խմբերի համար հին հավատքի խորհրդանշանները պահել են իրենց իմաստները:

Հօգուտ այն տեսակետի, որ ասեղնագործվող պատկերները հիմնականում ընկալվել են որպես զարդ, կերպասը զարդարելու միջոց, կարելի է դիտարկել

հետևյալ զարդանախշերը (նկ. 10)։ Այս օրինակներում ճարտարապետական և բուսական ձևերը այնպես են միախառնված, որ տիպաբանական բաժանումն իսկ դժվար է։ Միաժամանակ զգալի է, որ նման բարդ և բազմատարր հորինվածքները մշակվել են հմուտ նկարիչների կողմից, ասեղնագործական կենտրոններում, որոշակի նպատակներով։

Եզրակացություն

Ամփոփելով՝ նշենք, որ պաշտամունքային կառույցներ պատկերելու սովորությունը գալիս է հնագույն ժամանակներից։ Մեհյաններն ու տաճարները պատկերվել են թե՛ ներսից, և թե՛ դրսից։ Հաջորդող ժամանակներում մեհյաններին փոխարինելու են եկել եկեղեցիների և մզկիթների պատկերները։ Միաժամանակ մեհյանների պատկերումը շարունակվել է կիրառական արվեստի տարբեր ոլորտներում։ Նրանք ժամանակի ընթացքում կորցրել են իրենց իմաստը, սակայն դուրս չեն եկել շրջանառությունից։

Հայկական ասեղնագործության գեղազարդման համակարգում նման շենքերը, չունենալով դավանական իմաստ, ընկալվել են որպես զարդ, զարդարանքի բաղադրիչ, դդյակ, տարաշխարհիկ կառույց։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱՎԱՆԷՍԵԱՆ 1999 – Ավանէսեան Լ., *«Խորան» գորգի մի նմոյշի ուսումնասիրութիւն, «Հանդէս Ամսօրեայ»*, Վիեննա, Մխիթարեան միաբանութիւն, 1999, №1-12, էջ 413–432։

ԹՈՔՄԱՋՅԱՆ 2014 – Թոքմաջյան Հ., *Ուրֆայի ասեղնագործություն, Պրոնսօ Էքարտի Հաւաքածոյ*, հատոր Ա, Հալեպ, Բերիոյ Հայոց թեմի, 2014։

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 1987 – Հարությունյան Հ., *Ուրհայի ասեղնագործությունը. ցուցահանդեսի պրոսպեկտ*, Երևան, Հայաստանի պետական պատկերասրահ, 1987։

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 1996 – Հարությունյան Հ., *Ուրհայի ասեղնագործության դպրոցը*, «Բնօրրան» պարբերաթերթ, Երևան, 1996, № 3–4։

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ 1955 – Մնացականյան Ա., *Հայկական զարդարվեստ. Հիմնական մոտիվների ծագումն ու գաղափարական բովանդակությունը*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1955։

ՊԱՏՐԻԿ 1985 – Պատրիկ Ա., *Ուրհայի ասեղնագործությունը*, Երևան, «Սովետական գրող», 1985։

ՕՐՄԱՆԵԱՆ 2001 – արք. Օրմանեան Մ., *Ազգապատում*, հատոր Ա, Անթիլիաս, Ա. հ., 2001։

Hrazdan Tokmajyan

National Polytechnic University of Armenia
hrazdantok@hotmail.com

RELIGIOUS STRUCTURES IN EMBROIDERIES

Keywords: Urfa embroidery, churches, mosques, pagan temples, cross, crescent, tree of life.

Images of religious structures have been preserved in various fields of folk art. These structures are generally recognizable by the sacred symbol on the dome – a cross or crescent moon. However, in preserved samples, especially in embroideries, such images have been preserved, in which there is a leaf or a tree of life instead of a cross or crescent on the dome.

In our opinion, not only churches, mosques, but also pagan temples were embroidered with the tradition from ancient times to the beginning of the 20th century. These images, having lost their religious significance, act as secular structures, castles and are part of embroidered ornaments.

Раздан Токмаджян

Национальный политехнический университет Армении
hrazdantok@hotmail.com

КУЛЬТОВЫЕ СООРУЖЕНИЯ В ВЫШИВКАХ

Ключевые слова: вышивка Урфы, церкви, мечеть, языческие храмы, крест, полумесяц, древо жизни.

Изображения культовых сооружений сохранились в различных областях народного творчества. Эти сооружения обычно узнаваемы по священному символу на куполе: кресту или полумесяцу. Однако в сохранившихся образцах, в частности в вышивках, сохранились изображения, в которых вместо креста или полумесяца на куполе лист или древо жизни.

На наш взгляд, согласно дошедшим с древнейших времен до начала 20-го века традициям, вышивались не только церкви и мечети, но и языческие храмы. Эти изображения, утратив свое религиозное значение, предстают в виде вневременных сооружений, дворцов и являются составной частью вышитых орнаментов.

Հրազդան Թոքմաջյան

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նկ. 1. Ուրֆայի ասեղնագործությամբ և կառույցների համադրությամբ հորինվածք, Ottoman Embroidery, Marianne Ellis & Jennifer Wearden, 2001, Italy, page 103:

Նկ. 2. Ասեղնագործության համար նախապատրաստված նախանկար, Բրոնտո Էքարտի հավաքածու, Հայաստանի ազգային պատկերասրահ::

Նկ. 3. Գորգի վրայ պաշտամունքային կառույցների պատկեր,
ՀՊԹ, գորգի ֆոնդ, № 10101/5

Նկ. 4. Հայ կանայք Մշո դաշտի Հավադարիկ գյուղից, Միշել Փարուջյանի հավաքածու, Փարիզ։

Նկ. 5. Եկեղեցու որմնանկար առանձնատան մեջ, Այնթապ։ Եկեղեցական համալիրի պարկեր սափորի վրա, Հալեպ, Սբ. Աստվածածին եկեղեցի։

Նկ. 6. Որմնանկար Նազարեթյանների առանձնատանը, Այնթապ, լուսանկարը՝ Հ. Թոքմաջյանի հավաքածուից։

Նկ. 7. Բաղնիքի ցամկոց (հատված),
Ottoman Embroidery, Marianne Ellis & Jennifer Wearden, 2001, Italy, page 103:
Ոճավորված մզկիթի պատկերներ, վերցված համացանցից:

Նկ. 8. Մեհյանների պատկերներ,
Ottoman Embroidery, Marianne Ellis & Jennifer Wearden, 2001, Italy, page 176,177:

Նկ. 9.Լուսանցազարդ, Մատենադարան, MM-6249-163b:

Նկ. 10. Ասեղնագործության օրինակներ ճարտարապետաբուսական զարդանախշերով, Ottoman Embroidery, Marianne Ellis & Jennifer Wearden, 2001, Italy, page 175,184:
Ասեղնագործության համար նախատեսված նախանկար, Բրոնտ Էքարտի հավաքածու, Հայաստանի Ազգային Պատկերասրահ: